# ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ


## ԵԵԿ «ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

(ԿԱՐՏԻՆՅԻ, 28 ՄԱՅԻՍԻ - 3 ՀՈՒՆԻՍԻ 2005 Թ.)

Սույն թվականի մայիսի 28-ից հունիսի 3-ը Շվեյցարիայում, Ժնևի մերձակայքում գտնվող Կարտինյի ավանում, տեղի ունեցավ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) «Եկեղեցիները երկխոսության մեջ» հանձնախմբի հերթական հանդիպումը:

Հանդիպմանը, որպես Հայ Առաքելական Եկեղեցու պաշտոնական ներկայացուցիչ, մասնակցում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը: Սրբազան Հայրը նաև այդ հանձնախմբի համանախագահն է:

ԵԵԿ «Եկեղեցի և հասարակություն» հանձնախումբը ուսումնասիրող հանձնախումբ չէ բառիս նեղ իմաստով. այն ոչ միայն պատրաստում է էկումենիկ փաստաթղթեր՝ ներկայացնելով դրանք Եկեղեցիների հաստատմանը, այլև աջակցում և նախաձեռնում է մի շարք երկկողմ և բազմակողմ հանդիպումներ և երկխոսություններ՝ հատուկ ուշադրություն հրավիրելով Եկեղեցիների առջև ծառացած մի շարք մարտահրավերների աստվածաբանական տեսակետների վրա:

«Եկեղեցի և հասարակություն» հանձնախումբն ունի հետևյալ խնդիրները.

- Եվրոպայի Եկեղեցիների միջև կազմակերպել հանդիպումներ և երկխոսություններ.
- Հատուկ ուշադրություն դարձնել Ուղղափառ և Բարենորոգչական Եկեղեցիների միջև երկխոսությանը.
- Ամբողջ Եվրոպայում բարելավել համագործակցությունը առաքելության առումով.
- Ցանց ստեղծել բոլոր աստվածաբանական ֆակուլտետների միջև.
- Զարգացնել էկումենիկ կառույցները բոլոր Եկեղեցիներում.
- Միջկրոնական երկխոսության հետ կապված հարցերում աշխատել ընդհանուր հիմքի վրա:

Այս հանդիպման ընթացքում տեղի ունեցան լսումներ և քննարկումներ մի շարք հարցերի շուրջ, որոնցից մի քանիսը հաստատվեցին հանձնախմբի կողմից:

Ի մասնավորի հանդիպումը անդրադարձավ «Եկեղեցիները երկխոսության մեջ» հանձնախմբի 2004 թվականի Արհուսյան հանդիպման արդյունքներին, ԵԵԿ-ի Հնարավորական Կենտրոնի՝ «Եկեղեցիները Երկխոսության մեջ» հանձնախմբի վերաբերյալ որոշումներին, Եվրոպական Էկումենիկ 3-րդ Համախավաքին առնչվող նյութերին, Քարտա Էկումենիկայի շուրջ առաջացած դժվարություններին, Ուղղափառ և Բարենորոգչական Եկեղեցիների հարաբերություններին, մեծամասնություն և փոքրամասնություն հանդիսացող Եկեղեցիների, ինչպես նաև կրոնական համայնքների հետ հարաբերություններին:

*ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ*
*Միջեկեղեցական հարաբերությունների բաժին*

# ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ

Սույն թվականի մայիսի 9-16-ը Աթենքում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի (ԵՀԽ)՝ աշխարհում Ավետարանի քարոզչությանն ու առաքելությանը նվիրված կոնֆերանսը՝ «Արի, Սուրբ Հոգի, բուժիր և հաշտեցրու» խորագրով: Առաջին անգամ էր, որ այդ հանձնախումբն իր ժողովը գումարում էր Ուղղափառ երկրում: Կոնֆերանսը տեղի ունեցավ Ս. Անդրեասի կենտրոնում, որ գտնվում է Աթենքից 30 կմ հյուսիս-արևելք: Հայ Առաքելական Եկեղեցին այդ կոնֆերանսին ներկայացնում էր երեցկին Պոլա Դևեջյանը, իսկ Վահագն ուրարակիր Ազիզյանը մասնակցում էր որպես երիտասարդ սպասավոր:

Կոնֆերանսի նպատակն էր՝համախմբել 500 մասնակիցների աշխարհի ավելի քան 100 քրիստոնեական Եկեղեցիներից՝ միասին ջանալու այսօրվա աշխարհը Քրիստոսով բուժելու և հաշտեցնելու համար: Կոնֆերանսը մասնակիցներին հնարավորություն ընձեռեց միասին հավաքվել, իրենց փորձառությունը փոխանակել և միասին մտածել առաքելության մեջ առաջնահերթությունների և քրիստոնեական հետագա վկայության մասին:

Կոնֆերանսին մասնակցում էին բազմաթիվ երիտասարդներ, կանայք, տղամարդիկ, աստվածաբաններ, ուսանողներ, աշխարհականներ: Առաջին անգամ այդ կոնֆերանսին մասնակցում էին նաև ներկայացուցիչներ Հռոմեակաթոլիկ Եկեղեցուց, ինչպես նաև Հոգեգալստական և ժամանակակից ավետարանական հարանվանություններից:

Կոնֆերանսի բացման արարողությանը Երուսաղեմի քրիստոնեական Եկեղեցիները փայտյա մի խաչ ներկայացրեցին և նվիրեցին կոնֆերանսին: ԵՀԽ գլխավոր քարտուղար դոկ. Սամուել Կոբիան հանդես եկավ բացման խոսքով: Բացման նիստին հնչեց նաև Աթենքի և Համայն Հունաստանի Արքեպիսկոպոս Նորին Ամենապատվություն Քրիստոդուլոսի ողջույնի խոսքը: Հունաստանի Արքեպիսկոպոսը շեշտեց էկումենիկ հանդիպումների և երկխոսության, ինչպես նաև քրիստոնեական ինքնության և առաքելության նոր արտահայ-